ՀՀ ԿԳՄՍՆ ,Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոցե ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա- Սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում

Դպրոց-<< ՀՀ Վայոց ձորի Զառիթափի միջնակարգ դպրոց>> -ՊՈԱԿ

Ուսուցիչ- Անյուտա Խաչատրյան

Ղեկավար- Կիմա Օհանեսյան

Վայք 2023

Բովանդակություն

1. Ներածություն---------- 3

2. ԱՇԱԿԵՐՏԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ----------6

3. ԻՆՔՆՈՒՐՈՒՆՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ,ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ---11

4. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ և ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ << ՄԱՅՐԵՆԻԻ >> ԴԱՍԵՐԻՆ----------13

5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------15

6. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ----------17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ռուս ժամանակակից գիտնական Սավենկովի կարծիքով ուսուցումը պետք է լինի խնդրահարույց: Այն սովորողին մղելու է ինքնուրույն գործունեության և անհատական ստեղծագործական բնույթի որոնումների: Այդ դեպքում կրթությունը կվերածվի ոչ թե վերարտադրողական, այլ ստեղծագործական գործունեության, ինչը կարող է նպատակաուղղվել երեխաների հետաքրքրություններին և նրանց մեջ արթնացնել գիտելիքների իմացության ծարավ:

Թեմայի արդիականությունը:

Ինքնուրույնությունը մարդու կարևորագույն հատկանիշներից է, ինչի ձևավորումը սկսվում է բանավականին վաղ տարիքում: Երեխայի ինքնուրույնությունն արտահայտվում է նրա կյանքի բազմաթիվ ոլորտներում . խաղեր, մշակութահիգիենիկ, հանրօգուտ գործունեուություն, շրջապատի հետ շփումներ և այլն: Ինքնուրույնության ձևավորման մեջ մեծ դեր է հատկացվում երեխայի տարրական աշխատանքային գործողություններին: Ավելին աշխատանքի նկատմամբ հետաքրքրությունը, աշխատանքային հանձնարարություններ կատարելու պահանջմունքը և այլն դրվում և ձևավորվում են Ինքնուրույնության շրջանակներում:

Մարդկության զարգացման պատմության մեջ երբևէ չեն եղել փոփոխությունների ավելի հզոր ուժ և խթան, քան տեխնոլոգիաները: 21-րդ դարում տեխնոլոգիաները փոխել են ամեն ինչ՝ մարդկանց ապրելակերպը, սնվելու ձևը, տեղափոխվելու միջոցները, հաղորդակցման ձևը և անգամ մտածելակերպը:

Տարրական կրթությունը միտված է լուծելու անհատի կայացման գլխավոր խնդիրը ՝ ներդնել երեխայի ուսումնական գործունեության ձևավորման հիմքերը: Այն իր մեջ ներառում է որոշում կայացնելու, ուսուցման նպատակը իրագործելու պլանավորելու, ստուգելու կարողություններ: Անհրաժեշտություն է առաջանում որոնելու կրթական գործընթացի կազմակերպման համապատասխան միջոցներ և ձևեր ,որոնք էլ միտված են սովորողի մեջ ինքնուրույնության, ստեղծագործական ունակությունների զարգացմանը:

Հասարակությանն անհրաժեշտ են անհատներ,որոնք ունակ են համակողմանիորեն դիտարկելու իրենց առջև ծառացած խնդիրները և ստեղծագործաբար լուծելու դրանք:

Տարական դասարաններում դասավանդման գերխնդիրներից է սովորողի վերոնշյալ կարողությունների ձևավորումը:

Ուսուցչի խնդիրն է՝ յուրաքանչյուր սովորողի համար ստեղծել այնպիսի միջավայր, օգտագործել այնպիսի մեթոդներ, որ յուրաքանչյուրին հնարավորություն կտա ցուցաբերել ակտիվություն և ստեղծագործական միտք:Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները, ինչպիսիք են համագործակցության ուսուցումը, նախագծային մեթոդը, նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաների օգտագործումը, համացանցը, օգնում են իրականացնել դասավանդման աշակերտակենտրոն մոտեցում, ապահովվում են անհատական ուսուցում՝ ելնելով սովորողի հնարավորություններից, մակարդակից, հակումներից:

Տարրական դասարաններում սովորողի ինքնուրույնությանը և ստեղծագործական մոտեցման զարգացմանը միտված տեխնոլոգիաներն են.

. Գործնական աշխատանքներ. դրանք իրենց բնույթով ստեղծագործական առաջադրանքներ են:

. Նախագծերի մեթոդ կամ նախագծային աշխատանք:

. Տնային աշխատանքները

. Ինքնուրույն աշխատանքները

. Ստեղծագործական առաջադրանքների հաջորդական կիրառումը՝ պարզից բարդ սկզբունքով:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել աշակերտի ինքնուրույն գործունեությունը և դրա կազմակերպման ձևերը: Վեր հանել այն առանձնահատկությունները, որոնք բնորոշ են աշակերտի ինքնուրույն գործունեությանը:

Հետազոտության խնդիրները: Հետազոտության նպատակով պայմանավորված՝ առաջ են գալիս հետևյալ խնդիրները.

1. ՈՒսումնասիրել սովորողիի ինքնուրույն գործունեությունը :
2. Վեր հանել այն յուրահատկությունները, որոնք բնորոշ են սովորողի ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերին:
3. Ստեղծել այնպիսի միջավայր, որ յուրաքանչյուրի հնարավորություն կտա ցուցաբերելու ինքնուրույնություն,նախաձեռնություն և ստեղծագործական միտք:

4. Գտնել միջոցներ, մեթոդներ, որոնք ավելի կնպաստեն սովորողի ինքնուրույնության զարգացմանը,նախաձեռնողականության և ստեղծագործական մտքի դրսևորմանը:

Հետազոտության արդիականությունը: Սովորողների ինքնուրույն գործունեության զարգացման խնդիրը այժմ դարձել է մեր դպրոցների ամենանուրբ խնդիրներից մեկը: Մեր ուսումնասիրության թեման արդիական է այնքանով, որ դպրոցը պետք է սովորեցնի սովորողին լուծելու զանազան պրպտողական, ճանաչողական և գործնական խնդիրներ: Տարրական կրթաստիճանը ավարտողը պետք է ունակ լինի առաջարկելու խնդրի լուծման սեփական ալգորիթմը վերադասավորելով տարբեր տարրեր՝ գեներացնել նորը: Սովորողը կարողանում է ցուցաբերել ամբողջական գիտելիք՝ կիրառելով անցածը, գնահատել և ստեղծել նորը, որը կարող է լինել և՛ շաշափելի, և՛ կոնցեպտուալ:Հենց դրան էլ տանում է ժամանակակից կարողունակահեն կրթությունը:

Հետազոտության նշանակությունը: Սովորողի ինքնուրույն գործունեության,ստեղծագործական մտածողության ունակությունների զարգացմանը ուղղված աշխատանքների համակողմանի վերլուծությունը հնարավորություն է տալիս գնահատել ներկա վիճակը, բացահայտել առավելությունները և թերությունները այդ ուղղությամբ: Ապահովել անհատական ուսուցում՝ ելնելով սովորողի հնարավորությունների մակարդակից, հակումներից :

https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

ԱՇԱԿԵՐՏԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ:

Նախաձեռնողականության, ինքնուրույնության զարգացման նախադրյալները ստեղծվում են դեռ վաղ նախադպրոցական տարիքում: Սկսած նախադպրոցական տարիքից անձի այդ որակները ձեռք են բերում կայունություն և դառնում հաստատուն: Դա բնորոշ է որոշակի թվով երեխաների: Այն կապված է խառնվածքի, ընտանեկան դաստիարակության հետ: Ուսուցչի նպատակն է հնարավորինս մշակել այնպիսի մեթոդներ և միջոցներ, որ անձնավորության այդ հատկանիշները դրսևորվեն առավել մեծ թվով սովորողների գործունեության մեջ:Սովորողների մոտ վերոնշյալ որակների դաստիարակումը պայմանավորված է այն հանգամանքով , թե ինչպես է մեծահասակը ղեկավարում սովորողի գործունեությունը:Սովորողի մոտ անհրաժեշտ է առաջացնել ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու, իր առջև դրված խնդիրները լուծելու ցանկություն, ստեղծել այնպիսի իրավիճակ, որ սովորողը կարողանա նպատակ դնել,ձգտի ինքնուրույն հասնել դրված նպատակին և լուծել առաջացած խնդիրները: Առաջնային նշանակությունը տրվում է նյութն ընկալելուն, բովանդակության փոխանցմանը և իմաստի արտահայտմանը: ,Ո՞րն է ուսուցման ամենից արդյունավետ մեթոդը՝ հարցի լավագույն պատասխանն այն է, որ դա կախված է նպատակից, աշակերտից, ուսուցանվող նյութի բովանդակությունից և ուսուցչից: Հաջորդ լավագույն պատասխանն է ,երբ աշակերտներն իրենք են ուսուցանում այլ աշակերտներին:

Ավանդական դասարաններում աշակերտները սոսկ պասիվ կերպով են ներգրավված ուսումնառության գործում, այսինքն ՝ լսում են դասավանդողին, դիտում երբեմն-երբեմն ցուցադրվող սլայդը կամ (պահանջված դեպքում) ընթերցում դասագիրքը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ նման պասիվ ներգրավվածությունը սովորաբար հանգեցնում է աշակերտների կողմից գիտելիքների սահմանափակ մտապահման:

Ժամանակակից տեխնոլոգիան սովորողների և ուսուցիչների համար ապահովում է հարուստ, բազմազան ուսումնական միջավայր: Մեր ժամանակներում կրթության հանդեպ պահանջները լավագույնս իրականացվում է մեդիապայմաններում՝ անհատական համակարգչի առկայությամբ, քան ուսուցման հին տեխնոլոգիաների կիրառմամբ: Համակարգիչների միմյանց հետ կապը, ոչ միայն ապահովում է տեղեկատվական մուտք, այլև մեծապես ուժեղացնում է կապի մեջ գտնվողների հաղորդակցական հնարավորությունները: Ընդ որում, տեղեկատվության և հաղորդակցության բովանդակությունը արդիական է և անհրաժեշտ:

Եթե ավանդական ուսուցման ընթացքում դասավանդողների անելիքը

սահմանումներ տալն է, համապատասխան մեթոդական աջակցություն ստանալը, հանդեսներ կազմակերպելն ու շնորհանդեսներ նշելը, մեդիամիջոցների ընտրությունն ու ուսումնական գործընթացի վերահսկողությունը, ապա այսօր ոչ միայն կրթական մոտեցումներն են նոր, այլ նաև ուսուցչի գործառույթներն են այլ: Նախ պետք է կարողանալ ուսուցումն իրականցնել տարածության մեջ, ընդ որում այդ ամենը պետք է հիմնված լինի ոչ թե իր՝ ուսուցչի, այլ սովորողի անհատական փորձի վրա, ուսուցման գործընթացում խթանի ինքնակառավարում և ինքնահսկողություն:[1]

Եթե ուսուցիչը նախատեսել է դասագործընթացում ներառել աշխատանք համացանցով, ապա նախօրոք պետք է մտածի և պլանավորի աշխատանքի հնարավոր ուղղությունները, կազմի համապատասխան առաջադրանքներ, որոնք կարող են օգնել գտնելու տվյալ տեղեկությունը նաշխատելու դրանց հետ:

Դասագործընթացում ուսուցչին վերապահված է լինել դիտորդ, խորհրդատու: Ուսուցիչը ժամանակը պետք է վերահսկի այնպես, որ կարողանա զբաղվել սովորողների ունակությունների ու հմտությունների վերլուծությամբ, ճանաչի նրանց անհատական խնդիրներն ու դժվարությունները, իրականացնի անհատական խորհրդատվություն,ուսուցման անհատական աջակցություն:

[1] http://nina-gusnedy.blogspot.am/2011/03/history-of-toefl.html

Մարդը բնածին ինքնուրույն է, նախաձեռնող և ստեղծագործող։Վերոնշյալ ունակությունները զարգացնելու նպատակով հարկավոր է՝

Առաջին. սովորողների մեջ դասիարակել այնպիսի որակներ որոնք անմիջաբար առնչվում են ինքնուրույն և ստեղծագործական գործունեությանը և որոշում դրա արդյունավետությունը։

- Դրանք են՝ դիտողականություն
    - շփվողականություն
    - խոսքային
    - ընդհանուր ակտիվություն
    - հնարամտություն
    - դժվարությունները հաղթահարելու կամք
    - լավ մարզված հիշողություն
    - իրողությունները իմաստավորելու և համակողմանի վերլուծելու սովորույթ ու մշակույթ

Երկրորդ. պայմաններ ստեղծել սովորողի ինքնարտահայտման և անհատականության դրսևորման համար (Երբ երեխան ներկայացման մեջ ստանձնում է որևէ հերոսի դերը)։

Երրորդ. սովորողին դրդել ճանաչողության, գործընթացում կիրառել հետազոտական տարրեր, ինչպես նաև համատեղ ջանքերի գործադրմամաբ հասնել առաջադրված խնդիրների իրագործմանը։

ա. զբաղվի անհատական կամ խմբային գործունեությամբ ։
բ. երևակայական պատկերներով և այլ միջոցներով արտահայտի գաղափարներ։
գ. ունենա և արտահայտի սեփական կարծիք։

դ. հաճույք ստանա ստեղծագործական աշխատանքից և հաճույքով ցուցադրի:

2021 թ. փետրվարի 4-ից ուժի մեջ է մտել Հանրակրթության պետական նոր չափորոշիչը, որը ելնում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից: Ըստ Հանրակրթության պետական չափորոշչի՝ կարողունակությունները (կոմպետենցիաները) սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են, որոնք ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից: Կարողունակությունների վրա հիմնված կրթությամբ պայմանավորված ցանկալի արդյունքի հասնելու նպատակով ուսուցիչը պարտավոր է ստեղծել անհրաժեշտ պայմաններ՝

1. **Աշակերտի դերի փոփոխություն**. նա պետք է դառնա նորի ճանաչման գործընթացի ակտիվ մասնակիցը, ով հնարավորություն ունի ընտրություն կատարելու և իր հետաքրքրություններն ու պահանջները բավարարելու:

2. **Հոգեբանական բարենպաստ մթնոլորտ.** այստեղ իշխում են բարիդրացիական հարաբերություններ;

3. **Ներքին դրդապատճառներ.** դրանց առկայությամբ է հնարավոր ինքնուրույն և ստեղծագործական կարողությունների արդյունավետ զարգացումը:

4. **Աշակերտների չափավոր օգնության ցուցաբերում.** անհրաժեշտ է օգնություն ցույց տալ աշակերտներին, սակայն ոչ մի դեպքում չի կարելի երեխայի փոխարեն անել այն, ինչ նա կարող է անել ինքնուրույն:

5. **Դասի ընթացքում աշխատանքի բազմազան ձևերի** ՝ խմբային, անհատական,ֆրոնտալ, ներդաշնակ համակցում:

6. **Միջառարկայական կապերի պահպանում:** Ստեղծագործական խնդիրների լուծման ընթացքում անհրաժեշտ է կիրառել տարբերբնագավառներից ձեռք բերված գիտելիքները: Եվ որքան դժվար է խնդիրը,այնքան շատ գիտելիքներ պետք է կիրառել այն լուծելու համար:

7. **Հաջողության իրավիճակի ստեղծում:** Ստեղծագործական բնույթի առաջադրանքներ անհրաժեշտ է հանձնարարել ամբողջ դասարանին: Չի կարելի համագործակցել միայն

առավել օժտված երեխաների հետ: Այդ աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է խրախուսել բոլորին:

8. **Առաջադրանքների խելամիտ օգնություն:** Դրանք լինելու են բարդ, բայց միևնույն ժամանակ աշակերտների ներուժին համապատասխան և պետք է նպաստեն ստեղծագործական գործունեության նկատմամբ հետաքրքրության աճին:

9. **Ստեղծագործական առաջադրանքների բազմազանություն:** Դրանք պետք է լինեն բազմազան, ինչպես իրենց բովանդակությամբ և ձևով, այնպես էլ բարդության աստիճանով:

10. **Ստեղծագործական կարողությունների զարգացմանը նպաստող հնարների պարբերական և համակարգված կիրառություն:** Պահանջվող առաջադրանքների ոչ հաճախակի, դեպքից դեպք կատարումը չի նպաստում սովորողների ստեղծագործական գործունեության ատիվացմանը:

Այս առումով, սովորողների ստեղծագործական մտածողության և ինքնուրույն գործունեության զարգացումը կարևոր դեր ու նշանակություն է ստանում յուրաքանչյուր առարկայի ուսուցման գործընթացում:

ԻՆՔՆՈՒՐՈՒՆՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ <<ՄԱՅՐԵՆԻԻ>> ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Կրտսեր դպրոցական տարիքը ճանաչողական գործունեության առջև միշտ բաց է: Երեխան այդ տարիքում ընկալունակ է և ունի նորով հիանալու ու զարմանալու բացառիկ կարողություն: Նա ցանկանում է իր համար բացահայտել անհայտը, որոնել յուրահատուկը և տարբեր իրավիճակների համար ոչ ստանդարտ լուծումներ գտնել:Հարկավոր է ստեղծել այնպիսի իրավիճակներ, որտեղ երեխան շահագրգռված լինի աշխատելու և հետաքրքրությամբ կատարելու իր առջև դրված խնդիրը:Կրտսեր դպրոցում դասավանդվող առարկաների առարկայական չափորոշիչներն ու ծրագրերը , ինչպես նաև դասագրքերում զետեղված առաջադրանքները օգնում են լուծելու սովորողի ինքնուրույն և ստեղծագործական ունակությունների ձևավորման և զարգացման խնդիրը:Ավելի շատ փոխգործուն մեթոդներ, պրոբլեմային իրադրություններ ստեղծելու հնարների, գրավիչ մուտքի եղանակների ճիշտ,տեղին,շատ կիրառումը նպաստում են ինքնուրույն , նախաձեռնող, ստեղծագործ սովորողի կերտմանը:

Ըստ ԿԱԻ նախադպրոցական և տարրական բաժնի մասնագետ Կարինե Չիբուխչյանի կարելի է առանձնացնել չորս խումբ մեթոդներ և հնարներ, որոնք նպատակաուղղված են մայրենիի դասերին կրտսեր դպրոցականների ինքնուրույն և ստեղծագործական ակտիվության խթանմանը և համապատասխան ունակությունների զարգացմանը.
յուրաքանչյուր դաս պետք է նպաստի երեխայի ինքնուրույն և ստեղծագործական կարողությունների զարգացմանը:ՈՒստի ուսուցման գործընթացում հարկավոր է՝

1. Ստեղծագործության պատկերների բանավոր վերարտադրում

2. Թատերական գործունեություն

3. Նկարչական գործունեություն

4. Երաժշտական ստեղծագործական գործունեություն

Ստեղծագործության պատկերների բանավոր վերարտադրում

Գրական ստեղծագործությունը պահանջում է բառի հնարամիտ կիրառման և դրա գեղագիտական իմաստների բացահայտման արվեստ: Առաջին դասարանից սկսած աշակերտները կատարում են հատուկ առաջադրանքներ որոնք միտված են զարգացնելու սովորողի ինքնուրույն և ստեղծագործական ունակությունների զարգացմանը: Կրտսեր դպրոցականը ևս կարող է առաջարկել հարցեր:Այս աշխատանքը նպաստում է գլխավորը երկրորդականից տարբերելու կարողությունը, խորությամբ հասկանալու տեքստի իմաստը, հերոսի աչքերով նայել շրջապատի մարդկանց և այն իրադարձությունների, որոնց մասին խոսվում է ստեղծագործության մեջ:

Ստեղծագործության շարունակում, ստեղծագործության շարադրում, տեքստի բովանդակության պլանի կազմում, աշխատանք ընթերցողի օրագիր կազմում, սեղմագիր կազմելու առաջադրանքները նպաստում են տարրական դպրոցի սովորողի ինքնուրույնության և ստեղծագործական ունակությունների զարգացմանը:

Ձեր ուշադրությանն եմ ուզում ներկայացնել <<Գրական փորձ>> հնարը, որը կիրառվում է երրորդ և չորրորդ դասարաններում համեմատության համար երեխաներին տրվուում է որևէ ստեղծագործություներից մի դրվագ և նրանց ուշադրությունը հրավիրվում է հողինակի կողմից բառերի ընտրության վրա: Դիտարկվում են տարբերակներ, թե ինչպես է հնչում տեքստն առանց նշված բառերի և ինչով կարելի է փոխարինել դրանք: Այնուհետև երեխաները այս կամ այն արտահայտությունը որոնում են այլ տեքստերում մտածում սեփական օրինակներ, իսկ հետո փորձում օգտագործել դրանք իրենց խոսքում: Ինքնուրույն և ստեղծագործական առջադրանքների համակարգում հատուկ տեղ է գրավում <<Խառնաշփոթ>> բառախաղը:
Սովորողների ինքնուրույն և ստեղծագործական ունակությունները զարգացնելու լավագույն միջոց է հանելուկների, առած-ասացվածքների շուրջ տարվող աշխատանքը: Կրտսեր դպրոցականները փորձ են ձեռք բերում ոչ միայն գրական երկերի վերլուծության ,այլև սեփական տեքստերի ստեղծման ընթացքում: Դրանք կարող են լինել՝ հեքիաթներ, պատմվածքներ, բանաստեղծություններ:

Կրտսեր դպրոցականների ինքնուրույնության զարգացմանը նպաստում է նաև արտադասարանային ընթերցանությունների կազմակերպումը, որոնց պարագայում դպրոցականներն ինքնուրույն են ծանոթանում ստեղծագործություններին, իսկ դասերի ժամանակ կամ արտադասարանային գործունեության ընթացքում ինքնուրույնությունը

և նախաձեռնողականությունը կարող է զարգանալ ինքնուրույն, ստեղծագործական առաջադրանքներ կատարելու ընթացքում, օրինակ, խաչբառերի լուծում, վիկտորինաների կազմակերպում և այլն:

Դիդակտիկ խաղերին կրտսեր դպրոցականների մասնակցությունը նպաստում է նրանց ինքնահաստատմանը, ինքնադրսևորմանը, ինքնահիրացմանը, տարբեր դրդապատճառներով պայմանավորված՝ դրանք ձևավորում են հաջողության, հաղթանակի հասնելու կայուն ձգտումներ, կամային որակներ: Ստորև ներկայացնեմ դիդակտիկ խաղերի մի քանի նմուշներ, որոնք ինքս հաճախ կազմակերպում եմ՝ վերը նշված նպատակներով:

Ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքի ձևերը << Մայրենիի >> դասերին

Մայրենիի ուսուցման հիմնական նպատակներից մեկն էլ ստեղծագործական մտածողության ձևավորումն է, նորը ստեղծելու կարողության զարգացումը: Ստեղծագործական իրադրության ապահովմանը նպաստում է սովորողի խոսքի զարգացումը:Սովորողի խոսքի հարստացման և զարգացման գործընթացի հիմքում ընկած են ուսումնական աշխատանքը ստեղծագործական դարձնող հնարներ: Այս մասին հոգեբան Լեոնտևը գրել է . Որպեսզի մարդը լիարժեքորեն հաղորդակցվի , պետք է սկզբունքորեն տիրապետի կարողությունների մի ամբողջ շարքի. առաջին. կարողանա արագորեն և ճշտությամբ կողմնորոշվել հաղորդակցման պայմաններում, երկրորդ. կարողանա իր խոսքը ճիշտ պլանավորել, երրորդ. ունենա ստեղծագործելու ունակություն. . .
Վերջին տարիներին մի խումբ գիտաշխատողներ Պարնասի ղեկավարությամբ առաջարկում են.

1. Ստեղծագործական արգելքներին խոչնդոտող արգելքների վերացում:Օգնել սովորողին ձեռք բերելու ինքնավստահություն:

2. Մեծ դեր հատկացնել աշակերտի ենթագիտակցությանը:Նույնիսկ մակերեսայնորեն արտահայտված մտքերն ու դատողություններն պետք է նկատվեն ժամանակին, հղկվեն ,պարզաբանվեն և օգտագործվեն:

3. Մտավոր նախավարժանքի հնարավորության ստեղծումը:Սովորողին տալ այնպիսի առաջադրանքներ , որոնք մղում են մտածելու և մտքերն ազատ

արտահայտելու։

4Ստեղծագործական և ինքնուրույն հնարավորությունների զարգացման կարևոր պայմաններից է գիտելիքների ցանկի ընդլայնումը։Յուրացված գիտելիքը պետք է կիրառվի։

5. Սովորողը պետք էզգա իր առաջխաղացումը, հետազոտական կարողությունների զարգացումը, դրանց միջոցով ճանաչի սեփական հնարավորությունները։Այս մոտեցումը կօգնի դատողություններ անել, եզրահանգումներ կատարել։

6. Սխալներն ուղղել զգուշությամբ , հատկապես բանավոր խոսքում օգտագործել ուղղման ճիշտ մեթոդներ, չընդհատել , չկանխել մտքի զարգացումը։ Ոչ ճիշտ մոտեցման պատճառով սովորողը կխուսափի խոսք կառուցել, հանդես գալ սեփական տեսակետով, անվստահ կլինիիր խոսքի նկատմամբ , և կխաթարվի նրա մտքի թռիչքը։

7. Ուսուցման ընթացքում ուսուցիչը պետք է ճիշտ օգտագործի ուսումնաօժանդակ նյութերը՝ ապահովելով սովորողների ներգրավումը ստեղծագործական գործընթացի մեջ։

Եզրակացություն

<< Թող աշակերտը չսովորի գիտությունը,

թող նա սովորի այն ինքնուրույն>>:

Ժան Ժակ Ռուսո

Հիմնվելով թեմատիկ մանկավարժական գրականության , ինչպես նաև հենվելով մանկավարժական երկարամյա փորձիս վրա, կարող եմ եզրակացնել, որ կրտսեր դպրոցականների մոտ ինքնուրույնության և ստեղծագործական ունակությունների զարգացման համար կարևոր է, որպեսզի երեխաների համար ստեղծվեն սովորելու բարենպաստ պայմաններ, որոնց պարագայում նրանք հնարավորություն կունենան ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ, գտնել խնդիրների լուծումներ, հաղթահարել ուսումնառության ընթացքում հանդիպած դժվարությունները: Այն աշակերտները, որոնց մեջ մանկավարժական հաջող գործունեության ընթացքում ձևավորվում են ինքնուրույնության հակումները, որպես կանոն, բավական մեծ հետաքրքրություն են ցուցաբերում ուսման հանդեպ, մշտապես ձգտում են նոր գիտելիքներ ստանալ, վերլուծություններ և եզրահանգումներ կատարել: Այսպիսի աշակերտները ևս կարող են բազմաթիվ սխալներ կատարել իրենց ուսումնառության ընթացքում, սակայն նրանց առավելությունը կայանում է նրանում, որ կատարած սխալներից այս աշակերտները չեն հուսահատվում և փորձում են ուղղել այդ սխալները: Աշակերտի մեջ ինքնուրույնության և նախաձեռնողականության զգացումը զուգորդվում է նաև ինքնավերահսկողության և կամային հատկանիշների զարգացմամբ: Այս համատեքստում կարևոր և առանցքային է նաև մանկավարժի դերը: Նրա խնդիրն է ստեղծել բարենպաստ հոգեբանական մթնոլորտ, որի պարագայում աշակերտները հետաքրքրված և շահագրգռված կլինեն ուսումնական գործընթացով, կձգտեն ակտիվության և նախաձեռնողականության, ինչպես նաև ընդհանուր ինքնուրույնության: Դրա համար մնկավարժը կարող է կիրառել ուսումնական գործունեության կազմակերպման նորագույն մեթոդները, տեղեկատվական տեխնոլոգիաները, աշակերտների հետ աշխատանք կատարելու անհատական և խմբակային ձևեր, ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքներ և այն:

Այսպիսով՝ կրտսեր դպրոցականի ուսումնառությունն սկսվելու պահից հիմք է դրվում սովորողի ինքնուրույնության, նախաձեռնողականության, ստեղծագործական ունակությունների զարգացմուը: Այդ աշխատանքները իրականացվում են դասից-դաս, դասարանից-դասարան, մշտապես՝ աստիճանաբար բարդացնելու սկզբունքով: Նկատի է առնվում և՛ տեքստերը, և՛

սովորողների ինքնուրույնության աստիճանը, և՛ստեղծագործական կարողությունների մակարդակը։

Փորձը ցույց է տալիս , որ կարևոր և առանցքային է ուսուցչի դերը, ստեղծելու բարենպաստ հոգեբանական մթնոլորտ, որի պարագայում աշակերտը հետաքրքրված և շահագրգռված կլինի ուսուցման գործընթացով, կձգտեն ակտիվության ու նախաձեռնողականության։ Վերոնշյալում պակաս կարևոր չէ նաև ծնողների դերը։

Ժամանակակից կարողունակահեն կրթությունը ապահովում է ինքնուրույն , նախաձեռնող, ստեղծագործող անհատի ձևավորմանն ու զարգացմանը։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Ս. Մարության ,Ինքնուրույնության դաստիարակումը-2000 ուս. թ. էջ 5
2.Մանկավարժական գիտությունների թեկնածու դոցենտ Ս. Խաչատրյան - Նախաշավիղ 2003 թ. էջ 12

3.Կարինե Թորոսյան - Ինքնուրունյության և ստեղծագործական ունակությունների զարգացումը ,մայրենիիե դասավանդման ընթացքում

4.Կարինե Չիբուխչյան - Ինքնուրունյության և ստեղծագործական ունակությունների զարգացումը ,մայրենիիե դասավանդման ընթացքում- Նախաշավիղ

5.Հանրակրթության պետական չափորոշիչ 2021 թվական փետրվարի 4